

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտ, 2023 թվականի N 10-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ **ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**.

- Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 11:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:
- Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

- «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվների փաստացի կատարողականները հաստատելու մասին հարցը:
- «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
- Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 69-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
- Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 70-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
- «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվների փաստացի կատարողականները հաստատելու մասին հարցը:

6. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
7. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվների փաստացի կատարողականները հաստատելու մասին հարցը:
8. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
9. Հայաստանի Հանրապետության ազգային ժողով Հանրային հեռարձակողների 2022 թվականի գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ հաղորդում ներկայացնելու մասին հարցը:
10. Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի փետրվարի 28-ի № 16-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

28 մարտ, 2023 թվական
ք. Երևան